ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դեղձուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դեղձուտ, (0235)61906, (094)839565, dexcuthamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 դեկտեմբերի 2014թվականի N 7

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ;

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետերի պահանջներով ավագանին

որոշում է՝

Դեղձուտ համայնքի վարչական տարածքում 2015թ-ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետա- շինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների /ներառյալ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

Հիմնական օբեկների համար՝

1/ մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբեկտների համար 10 000 դրամ

2/ սույն կետի <<1.1>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500քմ մակերես ունեցող օբյեկտների համար -20 000 դրամ

բ. 501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար - 40 000 դրամ

գ. 1001-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -50 000 դրամ

դ. 3001 և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար – 100000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկների

`````համար -3 000 դրամ
4/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար -5 000 դրամ
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի համար, եթե սահմանված կարգով հաստատված Ճարտարապետա - շինարարական նախագծով՝
- չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն 3 000դրամ
3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբեկտների քանդման թույլտվության համար
տեղական տուրքը սահմանվում է 2000դրամ
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1/ ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ -5 000դրամ

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանճյուր եռամսյակի համար՝ 5 000դրամ
5. Համայնքի տարածքում բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր օրվա 1քմ-ի համար սահմանվում է
- 100դրամ
6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը $24^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
1/ առևտրի օբյեկտների համար - 25 000դրամ
2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար 50000 դրամ
3/ բաղնիքների /սաունաների/ համար -200000 դրամ
4/ խաղատների կազմակերպման համար -500000 դրամ
5/ շահումով խաղերի կազմակերպման համար -250000 դրամ
6/ վիճակախաղերի կազմակերպման համար -100000 դրամ
7. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ
տարվա համար սահմանվում է 1000 դրամ
Տեղական վճարներ
8. Համայնքի տարածքում շինարարություն կամ շինարարության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց
`````

որպես փոխհատուցման վճար գանձվում է 1000 դրամ -
9.Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու ,հետ վերցնելու և վարձակալությամբ տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց որպես փոխհատուցման վճար գանձվում է 1000 դրամ
10.Գյուղապետարանի կողմից մրցույթներ, աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից գանձվում է որպես փոխհատուցման վճար - 1000 դրամ
11. Համայնքի տարածքում աղբահանություն իրականացնելու նպատակով իրականացված ծառայությունների դիմաց որպես փոխհատուցման վճար գանձվում է յուրաքանչյուրից 10դրամ:
Որոշման 1; 2; 3 ենթակետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառել 0,5 գործակից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԲԱԲԿԵՆ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ
3. ՄԻՐՈՅԱՆ ԱՐԱՅԻԿ
4. ՄՈՎՍԻՍՅԱՆ ՅՈՒՐԻԿ
5. ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՇԱՀԲԱԶՅԱՆ ՍԱՀԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒՐԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ